

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ANNUAL REPORT

2012

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸ
հալակոռուպցիոն կենտրոն

Սույն հրապարակումն իրականացվել է
Բաց հասարակության հիմնադրամներ-Բուդապեշտի
աջակցությամբ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ
հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0025,
Այգեստան, 9-րդ փողոց, տուն 6
Հեռ.՝ +374 10 569910, 553069
Ֆաքս՝ +374 10 571399
Էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am

This publication was supported by
Open Society Foundations-Budapest

Transparency International
Anti-corruption Center
6 Aygestan 9th Street
Yerevan 0025, Armenia
Phones: +374 10 569910, 553069
Fax: +374 10 571399
Email: info@transparency.am
www.transparency.am

Բովանդակություն

Table of contents

Կազմակերպության մասին	4	About the Organization	5
Խորհուրդ	6	Board	6
Աշխատակազմ	7	Staff	7
Գործընկերներ	8	Partners	9
Գործունեություն	10	Activities	11
Մրցանակներ	36	Awards	37
Խորհրդատուներ և այլ միջոցառումներ	38	Conferences and Other Events	39
Ֆինանսավորում	46	Finances	46

Կազմակերպության մասին

«Տարածաշրջանային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000 թ. հուլիսին: 2001 թ. հոկտեմբերից այն հավատարմագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն շարժման կողմից՝ ներկայացնելու այն Հայաստանում: 2008 թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել և վերանվանվել է «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) ՀԿ:

Կազմակերպության առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

ԹԻՀԿ նպատակներն են՝ աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը, աջակցել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը, նպաստել հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը, խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասա-

րակության մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում:

ԹԻՀԿ գործունեության շրջանակն ընդգրկում է քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումների իրականացման վերաբերյալ հետազոտություն, մոնիտորինգ և գնահատում, ընտրությունների դիտորդություն, հանրային քաղաքականության և կառավարման գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում, կարողության ստեղծում, ինչպես նաև արդյունավետ հանրային մասնակցության համար մասնագիտական աջակցության ապահովում, շահերի պաշտպանություն՝ ուղղված արդյունավետ հանրային քաղաքականությանը և կառավարման բարեփոխումներին:

2012-ը նշանավորվել է 12 նոր անդամների ներգրավմամբ, կազմակերպության քաղաքականության մշակմամբ, կազմակերպության զարգացման գործընթացում աշխատակազմի ավելի ակտիվ մասնակցությամբ, ԹԻ քարտուղարության և մասնաճյուղերի հետ ավելի սերտ համագործակցությամբ:

About the Organization

The organization was established in July 2000 as a local NGO - the Center for Regional Development. In October 2001, it was granted the status of accredited National Chapter of Transparency International (TI), the global anti-corruption movement. In February 2008, the organization was reregistered and renamed as Transparency International Anti-corruption Center NGO (TIAC).

The mission of the organization is to promote good governance in Armenia through reducing corruption and strengthening democracy.

Its goals are to support effective anti-corruption policy and transparent and accountable governance; to assist holding free, fair and transparent elections and the establishment of electoral institute; to promote reasonable, transparent and accountable public resource management, including the management of state and community property and financial resources; to foster democratic processes, including protection of human rights and public participation in the governance processes of the country.

The scope of its activities includes the following: conducting research, monitoring and evaluation of political, economic and social reforms; observing elections; raising public awareness on public policy and governance processes; building the capacity as well as providing professional support for productive public participation; carrying out advocacy to provide effective public policy and governance reforms.

The year 2012 was marked by engagement of 12 new members, development of organization's policies, increased participation of the staff in organization's development process, increased cooperation with TI Secretariat and other TI chapters.

Խորհուրդ Board



Արևիկ Սարիբեկյան
Բրիտանական
խորհրդի
հայաստանյան
մասնաճյուղի տնօրեն

Arevik Saribekyan
Director of British
Council Armenian
Branch



Վազգեն
Կարապետյան
Եվրասիա
համագործակցության
հիմնադրամի
փոխտնօրեն

Vazgen Karapetyan
Country Associate
Director, Eurasia Part-
nership Foundation



Լանա Կառլովա
Տեմպուս ծրագրի
Հայաստանի ազգային
գրասենյակի ղեկավար

Lana Karlova
Coordinator of Na-
tional Tempus Office
in Armenia



Արթուր Սաքունց
Հելսինկյան
Զաղաքացիական
Ասամբլեայի
Վանաձորի
գրասենյակի
նախագահ

Artur Sakunts
Chairman of Helsinki
Citizens' Assembly
Vanadzor Office



Սուրեն Սաղաթելյան
Վորլդ Վիժն Հայաստան
բարեգործական
կազմակերպության
աջակցման բաժնի
ղեկավար

Suren Saghatelian
Organizational Support
Department Manager,
“World Vision Armenia”

Աշխատակազմ Staff



Վարուժան
Հոկտանյան
գործադիր տնօրեն

Varuzhan
Hochtanyan,
Executive Director



Վախթանգ
Սիրադեղյան
ծրագրի մասնագետ

Vakhtang
Siradeghyan,
Project Specialist



Սոնա Այվազյան
փոխտնօրեն

Sona Ayvazyan,
Deputy Director



Լենա Նազարյան
ծրագրի մասնագետ

Lena Nazaryan,
Project Specialist



Հերիքնազ
Տիգրանյան
իրավախորհրդատու

Heriknaz Tigranyan,
Legal Expert



Գոհար Գրիգորյան
հանրային կապերի
մասնագետ

Gohar Grigoryan,
Public Relations
Specialist



Քրիստինե
Մարգարյան
արվեստի տնօրենի
ղեկավար

Christina Margaryan,
Administrative
Manager



Նունե Այդինյան
գործունեության
լուսաբանման
մասնագետ

Nune Aydinyan,
Public Awareness
Specialist




Շահեն Շահինյան
գլխավոր հաշվապահ

Shahen Shahinyan,
Chief Accountant



Տաթևիկ Բարսեղյան
վարչական հարցերով
օգնական

Tatevik Barseghyan,
Administrative
Assistant



Էդիտա Նազարյան
վարչական
հարցերով օգնական

Edita Nazaryan,
Administrative
Assistant

Գործընկերներ

Երևանի մամուլի ակումբ ՀԿ

«Էկոդար» բնապահպանական ՀԿ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ Ադրբեջանի ներկայացուցչություն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ Վրաստանի ներկայացուցչություն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ Ուկրաինայի ներկայացուցչություն

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ

Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ

Իրավունքի գերակայություն ՀԿ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Լրատվամիջոցների բազմազանության ինստիտուտ ՀԿ

Հայաստանի հեղինակյան կոմիտե ՀԿ

Հեղինակյան քաղաքացիական ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ ՀԿ

Հետաքննող լրագրողներ ՀԿ

«Պետական կարիքների զոհեր» ՀԿ

Ստեֆան Բատորի հիմնադրամ

«Ուրբանլաբ Երեւան» ՀԿ

«Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն

Երևանի պաշտպանության նախաձեռնությունների միավորում

Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիա

«Մենք ենք այս քաղաքի տերը» հասարակական նախաձեռնություն

Partners

Yerevan Press Club NGO
"Ecodar" Environmental NGO
Transparency International Azerbaijan
Transparency International Georgia
Transparency International Ukraine
Journalists' Club "Asparez" NGO
Europe in Law Association NGO
Rule of the Right NGO
Protection of Rights Without Borders NGO
Media Diversity Institute NGO
Helsinki Committee of Armenia NGO
Helsinki Citizens' Assembly Vanadzor Office NGO
Investigative Journalists NGO
"Victims of State Needs" NGO
Stefan Batory Foundation
"Urbanlab Yerevan" NGO

"Army in Reality" Civic Initiative
"Partnership for Open Society" Initiative
Yerevan Protection Initiatives United
Teghut Defense Group Civic Initiative
UNCAC Coalition
"We are the Owners of This City" Public Initiative

Գործունեություն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Օրինավարության ազգային համակարգ

Օրինավարության ազգային համակարգի գնահատում

ԹԻՅԿ-ի «Հակակոռուպցիոն ուսումնասիրությունների վրա հիմնված շահերի պաշտպանություն» ծրագիրը գնահատում է ՀՀ կառավարման համակարգի «ինստիտուտները» թե՛ իրենց ներքին կոռուպցիոն ռիսկերի և թե՛ կոռուպցիայի դեմ պայքարում իրենց ներդրման առումով: Վերլուծության առանցքում օրենքով նախատեսվածի և իրականում տեղի ունեցածի միջև անհամապատասխանությունն է՝ վեր հանելով բարեփոխման անհրաժեշտ հատվածները: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնելու թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը Հայաստանի հանրային հատվածում կոռուպցիայի դեմ ավելի արդյունավետ պայքարի, իշխանությունների վրա ավելի մեծ ճնշում գործադրելու, միջազգային օգնության առավել արդյունավետության և կոռուպցիային առնչվող խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման միջոցով:

Հանրային ծառայություն

Հանրային ծառայության մասին օրենսդրության գործադրման մոնիտորինգի հարթակի ստեղծման նպատակով «Հանրային ծառայության մասին օրենքի մոնիտորինգ» ծրագրի շրջանակում ռազմավարություն է մշակվել, որը, մասնավորապես, ուղղված է շահերի բախմանը և բարձրաստիճան պաշտոնատար անձանց եկամուտների ու գույքի հայտարարագրերի թափանցիկությանը: Ծրագրի շրջանակում հանրային ծառայության մասին օրենքի համապատասխանության վերաբերյալ տվյալների առցանց շտեմարան է մշակվել՝ հնարավորություն ընձեռնելով հավաքված տեղեկատվության, ներառյալ՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ընտրված խմբի վերաբերյալ տվյալների, ինչպես նաև հետաքննական հոդվածների հրապարակումներն ավելի լավ կիրառելու, տեսապատկերման և հանրության համար բացահայտելու ուղղությամբ: ԹԻՅԿ-ը նաև վեր է հանել հանրային ծառայության մասին օրենքի այն թերություններն ու սողանքները, որոնք խոչընդոտում են հանրային ծառայողների վարքագծի պատշաճ կարգավորումը: Ծրագիրն իրականացվել է Հետաքննող լրագրողներ ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

MAIN AREAS OF WORK

GOVERNANCE SYSTEM

National integrity system


National integrity system assessment

TIAC's "Research Based Anti-corruption Advocacy" project evaluates key 'pillars' in Armenia's governance system, both in terms of their internal corruption risks and their contribution to fighting corruption in society at large. The analysis highlights discrepancies between the formal provisions and reality on the ground, making it clear where there is room for improvement. The project aims at increasing levels of transparency and accountability in the Armenian public sector through a more effective fight against corruption, increased pressure on authorities, heightened effectiveness of international assistance and enhanced public awareness on issues of corruption.

Public service

Intended to establish a platform for monitoring enforcement of the public service legislation a strategy for monitoring was elaborated under "Public Service Law Monitoring" project, particularly targeting the conflict of interest and transparency of income and property declarations

of high-ranking public officials. The project developed an online database of information on the compliance with the Public Service Law, allowing for better organization, visualization and public disclosure of the collected data, including information about the assets of the selected group of high-ranking public servants, as well as publication of investigative articles. TIAC also identified deficiencies and loopholes of Public Service Law that prevent proper regulation of the conduct of public servants. The project was implemented in cooperation with Investigative Journalists NGO.



ՀՀ-ում բրիտանական դեսպանատան բլոգի «Վստահել արդարադատությանը» վերտառությամբ հոդվածում ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Զեթրին Լիչը վկայակոչել է. «Թրանսփարենսի Ինթերնեշնլի վերջին հաշվետվությունը մատնանշում է, որ Հայաստանում բավարար կերպով չեն ներկայացվում պետական պաշտոնյաների և պատգամավորների ունեցվածքի տվյալները: Բարձրաստիճան անձանց ֆինանսական միջոցների թափանցիկությունը իսկապես կարևոր գործոն է հանրությանը ներկայացնելու, որ բոլորը իսկապես հավասար են օրենքի առաջ: <http://blogs.fco.gov.uk/ukinarmenia/hy/2012/10/17/%D5%BE%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A5%D5%9E%D5%AC-%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%A4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-2/>

Իրավակիրառ պրակտիկա

«Իրավակիրառ պրակտիկայի մոնիտորինգ» ծրագրի շրջանակում ԹԻՀԿ-ը մոնիտորինգի է ենթարկել իրավապահ մարմինների գործունեությունը՝ հիմնված հանցագործությունների մասին ԹԻՀԿ հաղորդումների ոստիկանության, դատախազության և հատուկ քննչական ծառայության տված պատասխանների վրա: Մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել, որ իրավապահ մարմինները բավական դժկամություն են ցուցաբերում կոռուպցիոն հանցավորությունները հետաքննելիս և բացահայտելիս: Իրավապահ մարմինների պատասխանները չեն համապատասխանում ՀՀ Զրեական դատավարության օրենսգրքի պահանջներին: Վերջինս պարտավորեցնում է, որ այդ հաստատությունները որոշում կայացնեն համաձայն հանցագործությունների

մասին հաղորդումների, միաժամանակ, փորձը ցույց է տալիս, որ 8-ից միայն 3 դեպքում է, որ ֆորմալ որոշում է կայացվում: ԹԻՀԿ-ը նաև ուսումնասիրել է կոռուպցիոն գործերը դատարաններում: Դիտարկվել են 50 մեղադրյալների մասով 32 կոռուպցիոն գործեր առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում: Գործերն ընտրվել են ՀՀ Զրեական օրենսգրքի Կոռուպցիոն հանցագործությունների ցանկի հիման վրա՝ կենտրոնաձևով ունեզրկման, փողերի վաճառման, կաշառակերության և իշխանության չարաշահման հանցագործությունների վրա:

In British Embassy in Armenia blog post, headlined “Trusting Justice” British Ambassador Katherine Leach referenced: “As a recent Transparency International report has shown, public disclosure of the financial assets and interests of senior officials and MPs in Armenia remains patchy and inadequate. A commitment to financial transparency for all senior officials and a demonstration of will to enforce it would send an important and powerful public message that everyone really is equal before the law.” <http://blogs.fco.gov.uk/ukinarmenia/2012/10/17/trusting-justice/>

Law enforcement

Within the framework of “Monitoring of Law Enforcement” project TIAC monitored performance of law enforcement bodies based on observation of the reaction of the Police, Prosecutor’s Office and Special Investigative Service to the reports on crime submitted by TIAC. Results of the monitoring showed that law enforcement bodies are rather reluctant to investigate and detect corruption related crimes. Responses of law enforcement bodies do not comply with the requirements of the Criminal Procedure Code. The latter mandates that those institutions make decisions in respect with crime reports, meanwhile the practice showed that only in 3 cases out of 8 there has been a formal decision made. TIAC also observed corruption cases in courts. Thirty-two corruption cases were observed with 50 accused persons in the Courts of First Instance and Court of Appeals. Cases were selected based on the list of RA Criminal Code corruption-related articles focusing on expropriation, money laundering, bribery and abuse of authority crimes.



Ռազմավարական դատավարություն

ԹԻՅԿ-ը 2012թ. «Ռազմավարական դատավարություն» ծրագրով հետամուտ է եղել տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատասխանատվության ստանալու իրավունքի խախտմանը՝ առևտրային գաղտնիքի և հարկային գաղտնիքի հիմքով 2 գործի շրջանակում: 1-ին գործով ՀՀ վարչական դատարանի վճռով բավարարվել է ԹԻՅԿ-ի հայցն ընդդեմ կադաստրի պետական կոմիտեի, որը մերժել էր Երևան քաղաքում գտնվող «Ուսանողական այգու» քարտեզի պատճենը և այգու սահմաններում գտնվող անշարժ գույքի օտարման (ձեռքբերման) և/կամ վարձակալության պայմանագրերի ու համապատասխան պետական գրանցման վկայականների պատճենների տրամադրումը՝ առևտրային գաղտնիք հանդիսանալու պատճառաբանությամբ: 2-րդ գործով ԹԻՅԿ-ը դիմել էր ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տրամադրել թվով 11 այլ հանքարդյունաբերական ընկերությունների կողմից 2010-2012թթ. ընթացքում վճարված հարկերի, բնօտագործման և բնապահպանական վճարների վերաբերյալ տեղեկատվություն: Կոմիտեի կողմից տեղեկատվության տրամադրումը մերժելուց հետո ԹԻՅԿ-ը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը մերժել է հայցի ընդունումը: Դատարանի մերժման որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարանում, սակայն վարչական դատարանի որոշումը մնացել է անփոփոխ:

Տեղեկատվության ազատություն

Որպես ԹԻ Վրաստանի և ԹԻ Ադրբեջանի ներկայացուցչությունների համագործակցությամբ իրականացված «Տեղեկատվության ազատությունը Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագրի մաս՝ ԹԻՅԿ-ը ներդրում է ունեցել «Տեղեկատվության ազատությունը հարավկովկասյան երկրներում» ձեռնարկ կազմելուն՝ Հայաստանի վերաբերյալ ուսումնասիրություն կատարելով: Ձեռնարկի արդյունքները ներկայացվել են հայաստանյան շահագրգիռ կողմերին Երևանում 2012թ. հուլիսին կայացած շնորհանդեսին: Արդյունքները ցույց են տալիս, որ «de jure» Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել իր քաղաքացիների տեղեկատվության ազատության պաշտպանության և երաշխավորման ուղղությամբ: Մինչդեռ «de facto» մակարդակում դեռևս չատ խնդրահարույց խոչընդոտներ կան, ինչպես օրինակ՝ պետական ծախսերին կամ պաշտպանությանն առնչվող հարցերը:


Strategic litigation

In 2012 within the scope of “Strategic litigation” project TIAC pursued 2 cases on violation of its freedom of information and right to get information in proper time on the grounds of trade secret and tax secret. Pursuant to the first case, by RA Administrative court ruling, TIAC’s claim was upheld against Real Estate Cadaster State Committee, which had rejected to provide the copy of “Student Park” map and copies of tenancy agreement on alienation (obtaining) of real estate in the vicinity of the park and/or relevant state registration certificates on the pretext of being trade secret. In the second case, TIAC applied to RA Government affiliated State Revenue Committee with a request to provide information on the paid taxes, nature utilization and nature protection payments paid in 2010-2012 by 11 other mining companies. After the Committee refused to provide information, TIAC brought an action to RA administrative court, which dismissed the action. Decision on action dismissal was appealed in the court of appeal, however administrative court decision remained unchanged.

Freedom of information

As a part of regional project “Freedom of Information in the South Caucasus, Part II” implemented in cooperation with TI Georgia and TI Azerbaijan, TIAC contributed to creation of a Handbook on “Freedom of Information in the South Caucasus Countries,” by doing research on Armenia. The findings of Handbook on “Freedom of Information in the South Caucasus Countries” were pre-

sented to the Armenian stakeholders in July 2012. They showed that at the de jure level Armenia has made significant progress toward protection and guaranteeing freedom of information to its citizens. However, de facto there are still many obstacles in accessing information that would trigger issues such as state expenses or defense related matters.



Հակակոռուպցիոն քաղաքականություն Միջազգային պարտավորություններ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա

2012թ. հոկտեմբերին ԹԻՅԿ ներկայացուցիչը Ավստրիայի Լաբսենբուրգ քաղաքի Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայում մասնակցել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի և դրա հսկման մեխանիզմի վերաբերյալ քաղաքացիական հասարակության կարողության ամրապնդման դասընթացին: Այն կազմակերպել էր ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիան: Դասընթացը անհրաժեշտ կարևոր փորձ է ապահովում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի դրույթների վերաբերյալ՝ կառավարությունների հետ մեկտեղ կոնվենցիայի հսկմանը նպաստելու նպատակով: 2013թ. ԹԻՅԿ-ը ստվերային զեկույց է նախապատրաստելու ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կատարման վերաբերյալ:

Օրիուսի գործընթաց

2012թ. փետրվարին ԹԻՅԿ ներկայացուցիչը մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի ունեցած Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին (Օրիուսի) կոնվենցիայից բխող՝ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման համար

անհրաժեշտ գործողությունների համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի առաջին նիստին:

ԹԻՅԿ-ը «Էկոդար» ՀԿ-ի և Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության հետ դիմում են ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով գիտական քննարկում կազմակերպել Օրիուսի կոնվենցիայի իրականացմանն ու շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ արդարադատության մատչելիության մասին մի շարք հիմնախնդիրների վերաբերյալ: Նրանք ներկայացրել են մարդու Էկոլոգիական իրավունքների կապակցությամբ Հայաստանի միջազգային պարտավորությունների իրականացման շուրջ սահմանադրական դատարանում քննարկում անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող փաստեր:

Anticorruption policies

International obligations

UN Convention against Corruption (UNCAC)

TIAC representative participated in a training to strengthen civil society's capacity on the UNCAC and its review mechanism, organized by UN Offices on Drugs and Crime (UNODC) and the UNCAC Coalition in October 2012 at the International Anti-Corruption Academy (IACA) in Laxenburg, Austria. The training provided the requisite substantive expertise on UNCAC provisions to contribute to the review alongside respective governments. A parallel report of UNCAC implementation should be prepared by TIAC in 2013.

Aarhus process

TIAC representative participated in a Meeting of Inter-departmental Commission on coordinating actions of Armenia's compliance with its obligations under the UNECE Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters Convention (Aarhus Convention) in the Ministry of Nature Protection in February 2012.

TIAC, together with EcoDar NGO and Teghut Defense citizens' initiative filed an application to the Constitutional Court of Armenia with a request to host an academic discussion on a number of issues related to implementation of the Aarhus Convention and access to justice in



environmental matters. They provided facts to the attention of the Court substantiating the necessity to hold discussion on implementation of Armenia's international obligations of environmental law.

Եվրոպական հարևանության քաղաքականություն (ԵՀՔ)

ԹԻՅԿ փորձագետները հինգերորդ տարին անընդմեջ հեղինակել են կոռուպցիայի և շրջակա միջավայրի վերաբերյալ գլուխները Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնության կողմից պատրաստված «Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը Հայաստանում 2011թ. - գործընկերության տեսակետը» մոնիտորինգային զեկույցում:

Եվրամիության Արևելյան գործընկերության (ԱԳ) նախաձեռնություն

ԹԻՅԿ-ը մասնակցել է ԱԳ քաղաքացիական հասարակության ֆորումի (ԶՀՖ) «Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, լավ կառավարում և կայունություն» 1-ին աշխատանքային խմբի աշխատանքին: 2012թ. փետրվար-մայիս ամիսներին Հայաստանի ազգային պատժորմի խմբի անդամների թվում ԹԻՅԿ-ը մասնակցել է Արևելյան գործընկերության եվրոպական ինտեգրացիայի ինդեքսի երկրորդ հրապարակման աշխատանքներին, որ ներկայացվել է 2012թ. հունիսին Երևանում: Հունիսին ԹԻՅԿ ներկայացուցիչները հանդես են եկել Հայաստանում կոռուպցիայի և ընտրությունների իրավիճակի վերաբերյալ դիտարկումներով՝ Բոյոսելում՝ ԶՀՖ աշխատանքային խմբի հանդիպման, Վանաձորում՝ «ԱԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի դերը հանրային կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում բարեփոխումների իրականացման մեջ» սեմինարի և Ստոկհոլմում՝ նոյեմբերին կայացած ԱԳ ԶՀՖ 4-րդ տարեկան համաժողովի ընթացքում:

European Neighborhood Policy (ENP)

TIAC experts contributed to the fifth consecutive monitoring annual report on corruption and environment of the European Neighborhood Policy (ENP) Action Plan implementation in 2011, the last year of the 5-year Action Plan, prepared by Partnership for Open Society Initiative.

Eastern Partnership (EaP) Initiative of European Union

TIAC participated in the activity of EaP Civil Society Forum (CSF) 1st Working Group (WG1) work on Democracy, Human Rights, Good Governance and Stability. In February-May 2012 among a group of the Armenian National Platform WG1 members, TIAC took part in the work on the second edition of the European Integration Index for Eastern Partnership countries, presented in Yerevan on June, 2012. TIAC representatives also presented their observations on the state of corruption and elections in Armenia during CSF Working Group meeting in Brussels in June as well as at a Seminar “The Role of the EaP Civil Society Forum in Implementing Reforms in the Fields of Public Administration and Fight against Corruption” in Vanadzor in July and the 4th annual Assembly of the Eastern Partnership Civil Society Forum in Stockholm in November, 2012.



Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ)

ԹԻՅԿ-ը ներդրում է ունեցել ՀՀ ԲԿԳ գործողությունների պլանի մշակմանը՝ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ԲԿԳ նախաձեռնությունում՝ ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրից բխող համակարգող աշխատանքային խմբի կազմում, որ բաղկացած է պետական մարմիններից և ՀԿ-ներից: ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագիրը, որ մշակվել է 2012թ. փետրվար-մարտին, ընդունվել է 2012թ. ապրիլի 17-18-ին Բրազիլիայում կայացած ԲԿԳ գագաթաժողովի ընթացքում: Սեպտեմբերին ԹԻՅԿ ներկայացուցիչը ներգրավվել է ԲԿԳ գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքային խմբում: ԹԻՅԿ-ը ներկայացնում է Հայաստանի ԶԿ-ները «Դեպի ԲԿԳ Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում» և «ԱԼԳ ԶԿ կարողությունների ամրապնդումը ԲԿԳ-ն որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք կիրառելու նպատակով» ծրագրերում, որ ԲԿԳ գլոբալ նախաձեռնության միջոցով նպատակ ունի ամրապնդելու կառավարություններին թափանցիկ և հաշվետու պահելու՝ ԱԼԳ երկրների՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի, Ուկրաինայի, ինչպես նաև Ռուսաստանի ԶԿ կարողությունները: Յուրաքանչյուր անդամ երկիր նախապատրաստել է կառավարության բարեփոխման

սեփական գործողությունների ծրագիր, պարտավորվել է 1012-2013թթ. կոռուպցիայի դեմ պայքարում զգալի փոփոխությունների հասնել և իր քաղաքացիների համար ապահովել տեղեկատվության մատչելիություն ու կառավարության որոշումների թափանցիկություն: ԹԻՅԿ ներկայացուցիչը հանդես է եկել ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագրի վերաբերյալ վերլուծությամբ նշված ծրագրի մասնակիցների՝ 2012թ. Կիևում կայացած աշխատանքային հանդիպման և մամուլի ասուլիսի ժամանակ: Նա նաև մասնակցել է հոկտեմբերին հորվաթիայի Դուբրովնիկ քաղաքում ԲԿԳ նախաձեռնության եվրոպական օգնության և աջակցման երկրորդ հանդիպմանը:

«Գլավկոմ» ուկրաինական Նորությունների գործակալությունը (<http://glavcom.ua/news/92670.html>) մեջբերել է Կիևում կայացած մամուլի ասուլիսին ԹԻՅԿ գործադիր տնօրենի «Առանց քաղաքացիների մասնակցության կառավարության բացությունը կվերածվի խիտացիայի» ելույթը:

Open Government Partnership (OGP)

TIAC contributed to the development of OGP Action Plan of the Republic of Armenia through participation in the Working Group on drafting the Action Plan, established by the Decision of the Armenian Prime Minister and composed of members of governmental institutions and NGOs. Developed during February-March 2012, the Action Plan was adopted at the April OGP Summit in Brasilia, Brazil. In September TIAC representative was involved in the Working Group on the OGP Action Plan implementation. TIAC represents Armenian CSOs in “Towards OGP in Eastern Partnership countries and Russia” and “Strengthening capacities of the EaP CSOs in using OGP as a tool for fight against corruption” projects, which aim to empower CSOs in Eastern Partnership countries, namely Georgia, Armenia, Azerbaijan, Moldova and Ukraine, as well as Russia to hold governments transparent and accountable via global OGP Initiative. Each member country prepared its own action plan to reform the government, took obligations to achieve considerable changes in fighting corruption in 2012-2013 and undertook duties to grant free access to information to their citizens and provide transparency of governmental decisions. TIAC representative came up with analysis of OGP Armenia Action Plan in a task meeting of the mentioned projects’ participants held in Kyiv in September and took part in a press conference. He also participated in OGP Second European Outreach and Support Meeting in Dubrovnik, Croatia in October.

Ukrainian news agency, “Glavkom” (<http://glavcom.ua/news/92670.html>) cited TIAC Executive Director’s address delivered during a press conference in Kyiv “Without citizens’ participation government’s openness will turn to imitation.”

Open Government Partnership



Հակակոռուպցիոն քարոզարշավներ

«Ժամանակն է սթափվել»

ԹԻՅԿ-ը միացել է Թրանսփարենսի ինթերնեշնլի «Ժամանակն է սթափվել» գլոբալ քարոզարշավին: Հիմնական տեսանկյունից հարմարեցվել է հայաստանյան իրավիճակին, և այն ցուցադրվել է 2012 թ. դեկտեմբերի 5-ին կայացած՝ Կոռուպցիայի ընկալման համաթվի արդյունքների ներկայացման ընթացքում: Կազմակերպությունը նաև Ամստերդամի բացիկներ է ուղարկել հակակոռուպցիոն ուղերձով տարբեր պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների ու ՀԿ-ների: Ծրագիրը նպատակ ունի ապահովելու ավելի մեծ թվով մարդկանց հետ հաղորդակցությունը, մասնավորապես, ցույց տալով կոռուպցիայի կործանարար հետևանքները մարդկության համար, և ջատագովելու իշխանությունների ու անհատների վերաբերմունքում փոփոխության անհրաժեշտությունը:

«Օպերացիա ինքնամաքրում»

ԹԻՅԿ-ը նախաձեռնել է քարոզարշավ՝ բարձրացնելու հանրային իրազեկությունը բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանում տիրող կոռուպցիայի վերաբերյալ՝ ջատագովելու 2013թ. փետրվարի նախագահական ընտրություններից հետո նորաստեղծ կառավարությունում արատավորված պաշտոնյաներին փոխելու անհրաժեշտությունը: Կազմակերպությունը պատրաստել է տեսանյութ, որով կոչ է անում կառավարությանը ինքնամաքրվել, և երկու անիմացիոն նյութեր, որոնցով ներկայացնում է սկանդալային կոռուպցիոն պատմություններում ներգրավված կամ անպարկեշտ վարքագիծ դրսևորած պաշտոնատար անձանց: Նյութերը շրջանառվել են զանազան լրատվամիջոցներով: Քարոզարշավը նախագծվել է ԹԻ Ուկրաինայի աջակցությամբ և խորհրդատվությամբ «Արդյունավետ հանրային քարոզարշավի նախագծում և իրականացում» ծրագրի շրջանակում: Այն իրականացվել է Հայաստանի հելսինկյան կոմիտեի, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հետ համագործակցությամբ: Կառավարության կազմի փոփոխության վրա քարոզարշավն ազդեցություն չի ունեցել:

Anti-corruption campaigns

"Time to Wake up"

TIAC joined Transparency International's "Time to Wake up" global campaign. It adapted the main video to Armenian situation and showed it during the presentation of 2012 Corruption Perceptions Index results on December 5, 2012. The organization also sent New Year cards with anti-corruption messages to various state institutions, international organizations and NGOs. The project aims to communicate to a greater number of people, particularly by showing the human cost of corruption and advocating for change in the behavior of governments and individuals.

"Self-cleansing Operation"

TIAC launched a campaign to raise public awareness on the corruption of high-ranking officers with an aim of advocating for change of discredited officials in the newly convened government following presidential elections of February 2013. The organization developed a video calling for self-cleansing of the government and two animations pointing to the officials engaged in corruption scandals or charged with unethical behavior. Materials were circulated through various media outlets. The campaign was designed with support and consultation of TI



Ukraine within the frame of "Design and Implementation of Effective Public Campaigns" project. It was carried out with the Armenian Helsinki Committee, Journalists' Club "Asparez" and Helsinki Citizens' Assembly Vanadzor Office NGOs. The campaign did not influence the change of government composition

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական կարգավորման համակարգերի վերլուծություն

Կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորման իրավական կարգավորման վերլուծություն

ԹԻՅԿ-ը մասնակցել է Ստեֆան Բատորի հիմնադրամի «Կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորումը» ծրագրին, որում ներգրավված էին գործընկերներ Չեխիայից, Էստոնիայից, Վրաստանից, Մոլդովայից, Մոնղոլիայից և Լեհաստանից: Ծրագիրը վերլուծել է քարոզչությունը և կուսակցությունների ֆինանսավորումը կարգավորող համակարգերը Կենտրոնական Եվրոպայում՝ կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորման բարեփոխումների համար քննարկումներ ու ջատագովությունը խթանելու, ինչպես նաև թափանցիկության խրախուսման ու կոռուպցիան կանխելուն ուղղված ֆինանսավորման սխեմայի փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ նախապայմանադրելու նպատակով: Վարչակազմում հուլիսին կայացած երկրորդ աշխատանքային հանդիպմանը ձևակերպվել է վերլուծության վերջնական ձևաթուղթը և համատեղ առաջարկություններ են արվել համապատասխան երկրներում ու տարածաշրջանում ցանկալի փոփոխությունների հասնելու համար:

Իրավական դաշտ

«Քաղաքական ընտրություն կատարելու՝ Հայաստանի քաղաքացիների ազատ կամքի խթանում» ծրագրի շրջանակում ԹԻՅԿ-ը Իրավունքի Եվրոպա միավորում, Յեյսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների», «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ների հետ համատեղ ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների առաջարկություններ է ներկայացրել՝ նպատակ ունենալով ավելացնել ընտրական գործընթացների հանդեպ հանրային վստահությունը: Ծրագրի նպատակն էր կառավարությանը մղել բարեփոխելու ընտրական օրենսգրքը 2013թ. նախագահական ընտրությունների նախաշեմին, որպեսզի ապահովվեր քաղաքացիների ազատ կամքի արտահայտման իրավունքը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանձնարարականների և այլ միջազգային չափանիշների համապատասխան: ՀԿ-ների առաջարկները հաշվի չեն առնվել այն պատճառաբանությամբ, թե քիչ ժամանակ էր մնացել մինչև նախատեսված ընտրությունների օրը:

ELECTIONS

Analysis of regulatory systems

Analysis of political party and electoral campaign finance regulations

TIAC participated in Stefan Batory Foundation's "Financing Political Parties and Election Campaigns" project, which engaged partners from Czech Republic, Estonia, Georgia, Moldova and Poland. The project analyzed regulatory systems of campaign and political party financing in Central Europe, to stimulate discussion and advocacy on the need for reforms in political party and electoral campaign financing, and to develop

recommendations for changes in funding schemes to promote transparency and corruption prevention. The final form of analysis was formulated and joint recommendations were drawn for desirable changes in the respective countries and region in the course of the second working meeting, held in July in Warsaw. They are posted on www.politicalfinance.org website in English and Russian.

Legal framework

Within the framework of "Promoting the Free Will of Citizens of Armenia to Elect Government" project, together with Europe in Law Association, Helsinki Citizens' Assembly Vanadzor Office, Protection of Rights Without Borders and Rule of the Right NGOs, TIAC came up with recommendations to amend the Electoral Code for strengthening public confidence in the electoral processes. The aim of the project was to put pressure on the government to reform electoral legislation prior to the presidential elections of 2013 in order to ensure free suffrage of citizens in line with OSCE/ODIHR recommendations and other international standards. Proposals of NGOs were not taken into consideration justification of the time proximity to the date of the planned elections.



Նախընտրական քարոզչության ֆինանսավորման և վարչական ռեսուրսի չարաշահման մոնիտորինգ

ԹԻՅԿ-ը իրականացրել է 2012թ. ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների նախընտրական քարոզչության ֆինանսավորման և վարչական ռեսուրսի օգտագործման մոնիտորինգ: Մոնիտորինգն անց է կացվել Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հետ համատեղ: 2012թ. սեպտեմբերին ԹԻՅԿ-ը ներկայացրել է մոնիտորինգի արդյունքները, ըստ որի ընտրություններին մասնակցող կուսակցություններից, դաշինքներից և ոչ մեկը չի գերազանցել ՀՀ ընտրական օրենսգրքով թույլատրված 100 միլիոն դրամի շեմը: Նման «համապատասխանությանը» մեծապես նպաստել են ՀՀ ընտրական ներկա օրենսգրքի այն սողանքները, որ թույլ են տալիս կուսակցություններին թաքցնել որոշ ծախսեր և դրանով խուսափել ծախսերի՝ թույլատրելի վերին շեմը գերազանցելուց: Այդ ծրագրի արդյունքներն առաջիկա ընտրությունների արդյունքների հետ մեկտեղ կիրառարակվեն 2013թ.:

Ընտրական թվերի վերլուծություն և ընտրական գործընթացների խախտումների բացահայտում

ԹԻՅԿ-ը իրականացրել է 2012 թ. ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների ընտրական թվերի համադրությամբ վերլուծական հաշվարկ «2012 թ. խորհրդարանական ընտրությունների էլեկտրոնային մոնիտորինգը Հայաստանում» ծրագրի շրջանակում: 2012թ. մայիսին և սեպտեմբերին ԹԻՅԿ-ը ներկայացրել է ընտրական թվերի մոնիտորինգի նախնական արդյունքները: Սույն գործունեության նպատակն էր խթանել ազատ և արդար ընտրությունների անցկացումը Հայաստանում՝ ընտրական թվերի համեմատական վերլուծության միջոցով վեր հանելով հնարավոր խախտումները, ինչպես օրինակ՝ հաշվառված ընտրողների թիվը, փաստացի քվեարկած ընտրողների թիվը, անճշտությունները և այլն: Հաշվարկի հիմնական արդյունքը հետևյալն է. ա) ընտրողների թվի հարաբերակցությունը մշտական բնակչության թվի հետ ողջ երկրում, ինչպես նաև յուրաքանչյուր մարզում և համայնքում, բ) ընտրության օրը քվեարկության արագությունը յուրաքանչյուր տեղամասում, գ) անճշտությունների հստակ չափը՝ սահմանված ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի: ԹԻՅԿ գեկույցն օգտագործել է ՀԱԿ ընդդիմադիր դաշինքը՝ ՀՀ սահմանադրական դատարանում քվեարկության արդյունքները բողոքարկելիս: ԹԻՅԿ-ը որպես նորարարություն պատրաստվում է կիրառել այդ մեթոդը 2013թ. Նախագահական ընտրություններում և Երվանի ավագանու ընտրություններում: Բոլոր երեք ընտրությունների մոնիտորինգի արդյունքները կամփոփվեն և կիրառարակվեն 2013թ.:

Monitoring campaign finance and abuse of administrative resources

TIAC monitored campaign finance and use of administrative resources of political parties and blocs participating in 2012 parliamentary elections at the proportional list vote. Monitoring was conducted in the cities of Yerevan, Gyumri and Vanadzor together with Journalists Club “Asparez” and Helsinki Citizens Assembly Vanadzor Office. In September 2012 TIAC presented results of the monitoring, according to which none of the participating parties, blocs exceeded the defined by the Electoral Code threshold of 100 mln. Drams. Such ‘compliance’ was attributed to the loopholes of the current Electoral Code allowing political forces to hide some of the campaign expenses and avoid exceeding the upper limit for campaign expenditures. The project findings together with upcoming elections’ results will be published in 2013.

Analyzing voting numbers and revealing irregularities of electoral processes

TIAC carried out 2012 Armenian parliamentary elections’ (only proportional list vote) voting numbers analytic calculation in the frame of “Electronic monitoring of 2012 parliamentary elections in Armenia” project. In May and also in September 2012 TIAC presented preliminary results of voting numbers electronic monitoring. The activity was aimed to contribute to conducting free and fair elections in Armenia through revealing possible violations via comparative analysis of some voting numbers, such as, the number of registered voters, the number of voters who actually voted, inaccuracies, etc. The major outcomes of the calculation were: a) comparison of



